

զրութեան հնարողը կոչուիլ։ Ոսխանակ առանց տրամաբանական զօդի մը պարզ նկարագրութիւններ ընելու, ջանաց ինքը յամենայնի գտնալ այն բնական ու ներքին վերաբերութիւններն որ կան 'ի մէջ երկրի և անոր բնակչացը։ աղբիւր առնելով իրեն այն ամէն տեղեկութիւններն որ պատմութիւնն ու բնական զիտութիւնք կը մատուցանեն, այն սիփի հետեւութիւններ հանեց՝ որոնք այսօրուան օրս աշխարհագրութիւնը տեսակ մը երկրիս բնախօսութիւնն ըրած են։ Ինձ որ այսպիսի յարգի կեանք մը գեռ քանի մը տարուան համար ալ երկնցած ըլլար հանդերձ մոտաւորական ուժով, անտարակոյս առաւել ևս յառաջադիմած կ'ըլլար աշխարհագրական զիտութիւնը։

### ՆԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ասիական ափունք վոսփորի։

Ծաղկագին Ասիական չէ ձեռակերտ մարդոյ, բնութեան անդ արարեալ զամենայն։ Չիք անդ Ալեօնուտ տէրէ և ոչ ինարտուտ, ոչ ապարանք գեսպանաց, և ոչ քաղաքք Հայոց կամ Ծրանկաց։ անդ լերինք միայն, պարանոցք որ անջատեն զնոսա, հովիտք փոքրունք 'ի գորդ կանաչագեղ յարմատս քարաժեռուիցն պարզեալք, վտակք որ սողին, հեղեղատք որ 'ի փրփուրս իւրեանց սպիտակացուցանեն զնոսա, անտառք որ զկողից նոցա կախին և սողոսկին 'ի հոսանսն, որ իջանեն մինչ յեզերս անթիւ խորչից ծովափանն։ սաղարթուց և դալարեաց անդ զարմազան ձեւ և երանգ, զոր և զրիչ նկարչի չպիտէ ճարտարել։ տնակք աստ անդ ցիր տաճիկ նաւաստեաց կամ այգորդաց սփռեալք ընդ ափնն զիրերօք բացագոյն, կամ 'ի սարահարթս ամբարձեալ անտառախիտ ըլլոյ, կամ համախումք 'ի ծայր խարակաց, ուր վարեն զքեզ հոսանք և խորտակին յալիս կապոյտ՝ որպէս զերկնից զիշերոյ։ ձկնորսաց առագաստք ինչ

սպիտակք քերեալ առ ծոցսն խորաջուր սահին սօս 'ի սօսւոյ։ տարմ բազմահոյլ սպիտակաթոյր թռչնոց որ յափնածիր մարգս ցամաքին։ արծուիք 'ի գըլիսոց լերանց զծովու հոլաթե սաւառնեալ։ խորչք խորհրդականք, 'ի սպառկափուցեալք 'ի պարեխաց և յանչեթեթ կոչեցս ծառոց, որոց ծանրացեալ սատք յամնոց սաղարթուց, կքին զալեօքն և խանձարուրս յօրինեն 'ի ծովու, յոր խորչքն մտանեն։ զիւղօրեքինչ յստուեր խորչիցն թագուցեալք, 'ի թիկանց ունելով բուրաստանս ընդ դարեանդս դալարի, զխումբս ծառոց առ ոտս ափափայց, զկարկուրայսն գգուեալս առ զրամբքնոցա յալեաց ծիծաղախիտ, և զերամն աղանեաց 'ի տանիսիւրեանց։ կանայք նոցա և մանկտի 'ի պատուհանս, ծերունիք յոտս մնաբէից բազմեալ ընդ սօսեաւ։ մշակք որ յանդատանաց ելանեն 'ի նաւակս, այլք ծանրաբեանեն զմակոյկն 'ի խրձունս դալար, և 'ի մուրտ կամ 'ի ծաղկաւետհաւամբնգի՝ առ յարագել և յայրել ձմբանի։ զօղեալ ուրուք զկնի շեղջից սիզոյն կախելոց, որ զեղեալ 'ի ջուրան թանան, ոչ զնաւն և ոչ զթիավալար ոք նշմարէ։ և թուի բեկոր իմն ծովափին զերծ յերկրէ ըստ դիպաց 'ի ջուրցն հոսանաց, ծածանել զմկանամբք ծովուն կանաչազարդ իւր տերեւովք և ծաղկօքն անուշահոտ։

ԼԱՄԱՐԴԻՆ  
Ուղևորութիւն յԱյնելու։

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Միջին դմբ<sup>1</sup>

Գերմանացի Միննեսինկերաց երգերը։

Ա.

Այն բանաստեղծական ու պատերազմական խանդն, որ կը բոլթոքէր միջին զարուն մէջ զ'ապղիա, զղլապա-

<sup>1</sup> Տես Համար էջ 272, 317, 373։ Համար էջ 110, 141, 178, 294։ Համար էջ 39։

նիա և զլուգղիա, վառեց ժամանակաւ նաև զիւերմանիա. և հարաւային սուապ բարբառը հոհէնշդայֆէն տոհմին շքեղ ու ասպետական արքունեաց մէջ կոկուելով՝ ձի դարուն պայծառ փայլ մը առաւ, և գրականական լեզու մը եղաւ՝ արժանաւոր թարգման մուաւորական բարձր չնշմանց: Այդ ժամանակն է որ միջին դարուն գրականութիւնը իր բարձրութեանը միջակէտն հասաւ. որովհետեւ մարդկային կիրքերն ալ թէպէտ առջինին պէս գործունեայ, ազգու ու անգութէին, բայց գոնէ մերկացած էին իրենց վայրագը բրտութիւնն ու դեգ ինքնասիրութիւնը որ իրենց սեփական էր, և պատուոյ, կրօնից ու դիւցազնութեան զգայուն էին: Խաչակիրք միով ոգւով աստուածսիրութեան և քաջութեան՝ ի մի ժողվուած՝ սկսան իրարույարգը ճանչնալ և փոխադարձ համարմամբ զիրար պատուել հասարակաց թշնամոյն առնե: Կոյն իսկ այս թշնամին իր նշանաւոր ուժովը պատճառ կ'ըլլար իրենց կտրը Ճութիւնը զրգուելու, մինչդեռ ուրիշ կողմանէ անոր ցոլացուցած յունական և արաբական քաղաքականութիւնները, որ առաջին անգամ իրենց աչքին կ'երևային, կրկին լուսաւոր ճառագայթներով կը թափանցէին իրենց սըրտին մէջ: Հյրեոր հայրենիքնին դարձան, իրենց բերած յիշատակներովը կը ջանային զարդարել զայն. և երբ մեծն Փրեգերիկոս Պարպարոսսա, որ գեղեցիկ դպրութեանց և գեղարուեստից նախանձախնդիր պաշտպան էր, 1154 տարւոյն Պաւրին գնաց, ուր կը սպասէր իրեն Պայմոն Բրուլանսսի կոմը հանդերձ խումբ մը դրուդագուրներով, մտաւորական դաշինքն հաստատուեցաւ մէջերնին. Վերմանիա բանաստեղծութեան սէր սէր ձեռամբ մը ազգուած առաջնորդներով, որ ամէն արտից մէջ թափանցած էին, տեղիք տուին կոյր բարկութեան մը յանկարծական թափոյն: Վերմանացւոց բարկութիւնը առակ եղած էր. բայց այս բարկութիւնը ազնուական ու մեծանձն կերպարանք մը կ'առնէր՝ երբոր պատերազմին վտանգաւոր տեղը կը վազէին և ուրախութեամբ կեանքերնին կը զոհէին Փրկչին արեամբը սրբուած հողուն վրայ: Եթէ Խաչակիրաց ժա

նմանողութեամբ գեղեցկացուցին զանոնք: Ուսապ բարբառն ալ անկէ ետքը ազգային լեզու դառնալով, հաստատուն կանոններ առաւ ու յղկուեցաւ, և քիչ ատենէն Վերմանիոյ մէջ ալ կը լսուէին ասպետական երգոց արձագանգները: Ո՞րանգամայն նոյն միջոցին նիզակախաղութիւններն՝ որ պատերազմի սիրոյն արդիւնքն էին, դղեկաց մէջ ստէպ կը հանդիսանային. կանայք գերութենէ ազատելով և հաւատոց ձեռքով ազնուականացած՝ ընկերութեան բարբը կը փոխէին, ու իրենց օգտակար ազգեցութիւնները կը դադրեցնէր: Պատուոյ ու մարդավարութենէ օրէնքներ գրուեցան՝ յանցանաց համար սահմանուած օրէնքներուն պէս, որոնք 'ի մի հաւաքուեցան նոյն դարուն մէջ և մինչեւ հիմա անկորուստ մնացած են: Եշկեղեցւոյ կարգադրութիւնները պապերը կը հոգային. կայսերք ալ հոռմէական իրաւամբք կ'երթային: Կսպետութեան հաստատուիլով բարուց լաւութեան գրաւական մը եղաւ, որովհետեւ խղճմանաց պարտաւորութիւններ գնելով ասպետաց վրայ՝ առանց երգմնազանցութեան կարելի չէր զանց առնել զանոնք: Կսանկով զօրաւոր թումբը մը եղաւ այն ներքին կոփիւներուն միջոց, որովք նոյն դարերուն Վերմանիա ինքզինքը կը խոցոտէր: Կնով սորվեցան մարդիկ յաղթանակ ըրած ատեննին հանդարտ ու վեհ սիրտ մը ունենալ. անով դարձեալ գթալ թըշուառաց վրայ, ողորմիլ աղքատին ու անմեղները պաշտպանել: Վակայն ստէպ այս վեհանձն գաղափարները, որ ամէն արտից մէջ թափանցած էին, տեղիք տուին կոյր բարկութեան մը յանկարծական թափոյն: Վերմանացւոց բարկութիւնը առակ եղած էր. բայց այս բարկութիւնը ազնուական ու մեծանձն կերպարանք մը կ'առնէր՝ երբոր պատերազմին վտանգաւոր տեղը կը վազէին և ուրախութեամբ կեանքերնին կը զոհէին Փրկչին արեամբը սրբուած հողուն վրայ: Եթէ Խաչակիրաց ժա

մանակը քրիստոնէութեան դիւցազնաւ կան ժամանակն է՝ ինչպէս ըսկն ումանք, քան յամենայն քերթութիւնս՝ մինէ սինէրաց բանաստեղծութեանը մէջ դուրս կը ցատքէ այն :

Ասոնք սկզբան Դաղղիոյ դրսապատութիւնն և դրսավագանն հետևեցան, անոնց տաղերովն ու քերթուածներովն իրենց երևակայութիւնը բեղնաւորելով. բայց յետոյ իրենց ազգային յատուկ ոճ մը առին, որուն գլխաւոր յատկութիւններն էին ծանրութիւն և ազնուութիւն : Իրենք որ բնութքու գաղղիական չափազանց փաղաքշական և ոչ ալ խայթող համարձակ լեզուին ենթակայ էին, ընդ հակառակն աւելի մտածող՝ բայց միանգամայն աւելի տարտամ և աւելի խորհրդայած միտք ունէին, հիւսիսային ու հարաւային երկիրներու մտաց տարեցները իրենց տարեցներուն հետ զանգեցին : Ո՞իննէսինկերք իրենք իրենց խորհրդածութեանցը մէջ ընկղմած՝ կարծես թէ աշխարհիս աղմշկալից տեսարանը կը մոռնան, և ուրիշ բան չեն տեսնար՝ ինմա՝ բայց եթէ իրենց սիրելին, մարդագետինները, գետերն ու թռչունները. և այլ և այլ չափերով, բայց միշտ քաղցր ու չնորհալից իմաստիւք կը բացատրեն իրենց իզները, ցաւերն ու յաջողութիւնները : Խըրեմն ալ կ'արթըննան, և այն միգապատ սահմանէն դուրս ելլելով՝ կը նկատեն մարդուս կեանքը, կը նշանակեն անոր խաբէական յոյսերն ու անոր ամէն վիճակը մանր կը նկարագրեն : Այսպիսի քերթութիւնները սիրոյ երգեր չեն փափուկ նմանաձայն վերջաւորութքը հիւսուած և գողտը ու առօրեայ պատկերներով վայելքացած որ անցողական փայլ մը միսյն ունին . ասոնք կրօնական զգացման զեղումն էն, առաքինութեան և բարոյականի պատուելներ, և իմաստուն ու խիստ անդրադարձութիւններ մարդկային իրաց անհասատութեանն ու մեր կենաց օրերն օգտակար կերպով անցընելու վրայ : Ո՞ երջապէս երբոր պատերազմական փողն հնչեցընելով՝

պատմութեան, կամ թէ երեակայութեան ասպարէզը կը դիմեն, դիւցազնաց փառքը, կոիւներ, քաջազործութիւննք, աշխարհակալութիւններ, մեծամեծ վրէժիննդրութիւններ կամ հայրենասիրութեան ու հաւատոց վեհ յաղթանակն երգելու համար, իրենց բանաստեղծութիւնը կը ձոխանայ և բարձր թռիչ կ'առնէ, և բոլոր բնութենէ այլաբանութիւններ փոխ կ'առնէ :

Ասանկով իրեք ցեղ քերթութեան մշակեցին միննէսինկերք, քնարերգական, վարդապետական և դիւցազնական քերթութիւն, 'ի բաց առեալ թատրերգութիւնն որ գեռ անծանօթէ էր իրենց դարուն : Քնարերգական մասէն կ'առնենք բանին թելը, որ քան զամենայն ազգ բանաստեղծութեան աւելի կենդանի գունով կը ստորագրէ հոգւոյն ներքին խանդաղանաց զգացմունքները, և միանգամայն իւրաքանչիւր ասպետ բանաստեղծին գիւտն ու հանձարը աւելի դուրս կը ցատքեցընէ :

Գերմանական մնաւային այս ներքին զեղմունքներն անտարակոյս մեզի անձանօթ պիտի մնային և դարուց անդունդը պիտի գլորէին, թէ որ Հյուրիկցի հայրենասէր ու ազնիւ ասպետ մը՝ Ո՞ոճէր Ո՞անեսսէ անուամբ՝ վեհ խորհրդով մը մտածած չըլլար 1300 տարւոյն ատենները բոլոր Գերմանիա պտըտիլ ու միննէսինկերաց ցան և ցիրեցերն 'ի մի հաւաքել, զորոնք ինքն ու իր որդին օրինակելով՝ մէկ հատորի մը մէջ կրցան ամիտոփել : Ո՞յս ձեռագիրն՝ որ ժդ դարու հարիւր քառասուն քերթողաց քնարերգակ բանաստեղծութիւնքը կը բովանդակէ՝ մեծաւ նըլը դութեամբ ու մաքրութեամբ գրուածէ, և զարդարուած գունաւոր նկարներով, որոնք կը ներկայացըննեն այն քերթութեանց մէջ յիշատակուած ասպետներուն, իշխանաց ու թագաւորներուն իւրաքանչիւրին գէմքը, զրահներն ու ամենէն աւելի կտրիչ գործերնին : Ո՞յս անգին զիլքը երկար ժամանակ Ո՞անեսսէ աղգատոչմին մէջ մնաց. յետոյ պարգև տրուեցաւ պալատինեան

կայսրընտրին գրատանը, անկից ալ երեսուն տարուան պատերազմին միջոցը գաղտնի կերպով՝ բարիզու ազգային գրատունը փոխադրուեցաւ, որուն ամենէն հարուստ գանձերէն մէկն է մինչև ցայսօր :

Բայց բնական էր որ Պարմանացիք թէ և ձեռք չկարենային ալ ճգել այս գիրքը, որ իրենց միջին դարու գրականութեանը գլխաւոր շտեմարանն էր, գոնէ իրաւոնք ունէին գաղափարելու զայն : Ի՞նոր համար Պաղպիա ալ յանձնեց զայն 1746 տարւոյն Աղբազպուրկցի Շեֆլին և Հուրիկցի Պոտմէր գիտուններուն ձեռքը, և այս յետնոյն խնամքով՝ քանի մը ամսուան մէջ ամբողջ օրինակ մը գաղափարուեցաւ, և քիչ ետքը՝ ի լոյս ընծայուեցաւ տպագրութեամբ Օուիցերիոյ մէջ, ուսկից բոլոր Պարմանիա տարածուեցաւ : Ի՞նա ու Հումքաղաքները գտնուած մնացորդներն ալ մէկտեղ առնելով, միանգամայն առանձին գտնուած զիւցազնական մեծ քերթուածները, գրեթէ իրեք հարիւրի կը հասնի ծանուցեալ մինսէսինկէրաց թիւը՝ ֆիդարուն վերջէն սկսեալ մինչև ժԴ դարուն մէջերը : Այսկայն որովհետեւ քրովանսեան և վալլոնական գրականութիւնն սկըսաւ 1100 թուականին, և շուտով տարածուեցաւ Պարմանիոյ մէջ, հաւանական է որ գերմանական բանաստեղծութեան առաջին փորձերը զանց առնուած են այս ընդարձակածաւալ հաւաքման մէջ :

Ո՞րնսէսինկէրաց գրքին մէջ Հենրիկոս Զե անունն ու պատկերը ամենէն առաջ կը տեսնուի, որ Առապի տնէն էր և կայսր Պարմանիոյ ու թագաւոր Աիկիլոյ՝ ի 1190 : Այս իշխանը, որ իր ազնիւ յատկութիւնները խաւարեցուց անգիւթութքն ու ագահութեամբը, իր հօրը ողջութեանը միջոց՝ շնորհալի ցուց՝ մը շիներ է իր սիրելոյն վրայօք, որուն մէջ վեհանձն ոգւց մը գրացմունքներ կը ցոլան : Արովհետեւ

այս տաղն յայտնապէս իր երիտասարդութեան ժամանակն յօրիներ է, կը նայ ըսուիլ Հենրիկոս Զե համար որ Պարմանացւոց բնարերգական բանաստեղծութեան առաջին գրգիռ տուողն ինքն եղած է, ինչպէս իր հայրը, Փրեդերիկոս Ա, բրովանսեան բանաստեղծութեան տուած էր, ինչպէս իր որդին, Փրեդերիկոս Բ, Խտալացւոց բանաստեղծութեան տուաւ . Ի՞նչ մեծ պատիւ ազգատոհմի մը՝ իրեք զանազան գրականութեանց նախահայրը ըլլալ :

Հիշեալ փոքրիկ քերթուածը հետեւալն է :

“ Ա՞ղջունեմերգերովս իմ սիրելիս, ուսկից չեմ կրնար և չեմ ուզեր հեռանալ . կ'ուզէի ողջունել զինքը կենդանի ձայնիւ, աւազ, երկար ատենէ ՚ի վեր է որ կը փափաքիմ : Ավ որ այս տողերն արտասանէ անոր դիմայն, որուն հետաւորութիւնը վիշտ է ինձի, եթէ ասպետ մը ըլլայ և եթէ տիկին մը, թողապահովցընէ զանիկայ որ ես իրեն հաւատարիմ եմ :

„ Պետութիւնք և նահանգք իմն են երբոր ես իմ սիրելոյս քովն եմ . բայց անկէց հեռացածիս պէս՝ իշխանութիւն և հարստութիւնս ալ կ'աներեւութանան ու ցաւալից տհաճութեան մը մէջ զիս կը թողուն : Այսպէս իմ ուրախութիւնս շարունակ կ'աւելնայ ու կը պակսի, և կարծեմ թէ մինչև իմ մահս ասասանկ պիտի շարունակէ :

„ Քանի որ զինքը այսպիսի գորովով կը սիրեմ, մոտածութեանս ու սրտիս մէջ կը կրեմ, շատ անգամ խորունկ ցաւոց նշաւակ ալ ըլլալով, ի՞նչ փոխարէն ընդուներ եմ սիրոյս : Աւ սակայն անանկքաղցը է յոյսը, որ փոխանակ հրաժարելու իրմէն՝ աւելի յանձն կ'առնէի թագաւորութենէ հրաժարիլ :

„ Ո՞եծ յանցանք մըն է կարծելը թէ ես սիրով չէի անցըներ բոլոր կեանքս առանց երեւք արքունական թագով պասկուելու, իրմէն չզրկուելու համար : Թէ որ ես զինքը կորսնցընէի, ի՞նչ կը

մնար ինծի : Աէի կրնար ոչ կանանց և ոչ մարդկանց առջև ծիծաղիլ . որով հետեւ սիրտս թափուր կ'ըլլար յամենայն միմիթարութենէ „ :

Հենրիկոսի ժամանակակից էր Հենրիկոս Աշլեք միննէսինկէրը , որ ծնաւի Ա եսդֆալիա , և 1180 տարւոյն Գլէվի և Ժառւրինկիոյ արքունիքներն ընդունուեցաւ : Իր բանաստեղծական երկասիրութիւնքն են՝ գերմանական լեզուով Ենէտան մը , Էրնէստ քերթուածը , և քանի մը փափուկ ցուցեր , որոնց մէջ էր միացընէ սաքսոն բարբառին ոյժը գերմանական բարբառին քաղցրութեանն հետ : Ինդհանրապէս զուտ է լեզուն , և շատ զգայուն քերթող է . իր գործածած նմանաձայն վերջաւորութիւններն ալ մեծ ախորժակով յօրինուած են :

“ Տարւոյն այն եղանակին մէջ որ օրերը կ'երկրննան , երկինք էր պայծառանայ , կտաւասէր թուզունը էր հնչեցընէ իր անոյշ երգերն որ զմեզ էր զըւարթացընեն , պէտք է մարդ չնորհակալ ըլլայ լ'ստուծոյ իր սիրոյն անխուով և անապաշաւ ետեւ ըլլալուն համար , :

Հետեւեալ երգը առջինին հակադրութիւն մըն է կերպով մը .

“ Վանի որ արեն իր սկաւառակը դէպ'ի հիւսիս էր հակէ և պզտի թըռչուններն իրենց քաղցրաձայնութիւնքը դադրեցուցին , սիրտս տիսուր է . էր զգամ ձմեռուան գալուստն որ իր նշովը էր թոռմեցընէ գունաթափ ծաղիկները . տիրութիւն էր բերէ ինծի , և ոչ ինչ զիս էր միմիթարէ „ :

Լըրեմն սրտաշարժ ներդաշնակութեամբ մը էր հնչէ իր ձայնը , ինչպէս այս տաղին մէջ որ իր սիրելոյն վրայ շնածած է .

“ Իոլոր մտածութիւնս , բոլոր զգացմունքներս ուրիշ բանի չեն ցանկար՝ բայց եթէ իմացընել իրեն որ ես զինքը միայն կ'երգեմ , և միշտ զինքը , որ անանկ առաքինի ու մաքրակենցաղ է :

“ Ինչպիսի ուրախութիւն էր զգայի , ինչպէս ինքիրմէս դուրս կ'ելլայի՝ թէ

որ այդ ազնիւ հոգւով անձը , որ ամենակն կեղծել չգիտեր , մոտածէր վերջապէս իմանձկութիւնս : Ինծի անանկ կու գայ՝ որ ան ատեն գթութեամբ էր նայէր ինծի , ինքն որ անանկ սիրելի է ու անանկ բարեսիրտ :

“ ( Ճրճնեալ ըլլայ այն մտածութիւն որով սկսայ սիրել զինքն ու օր օրուան վրայ սէրս միշտ աւելցընել , իբրև հրաշալիք մը համարելով զինքը՝ արժանի հաստատուն սիրոյ մը , ինքն որ անանկ ազնուական է ու անանկ զարմանալի :

“ Զեռքերս իրարու էր միաւորեմ , ոտքը կ'իյնամ , որպէս զի ինչպէս որ Կաղու միմիթարեց զ'յորիսդան , ինքն ալինծի ժպիտով մը նայի , իմ ցաւոցս վրայ խորհի , թշուաւութիւններս վերջացընէ , ինքն որ անանկ ներողամիտ և անանկ ազնիւ է „ :

Հարդման լ'յէ քերթոյն ալ նոյն ատենները կ'ապրէր , և կ'երեւայ թէ Ուուապի բնիկ էր ու մասնակից եղեր էր երրորդ խաչակրութեան : Հօրինած է Խվէնի վրայ դիւցազնական քերթուած մը , և ծանօթ է քան զան աւելի նշանաւոր երկասիրութեամբ մը , որ է Հէտ Հէնրիկոս բարոյական քերթուածը : Լ'յնուական պարզութիւն մըն է իր որոշիչ յատկութիւնը , որ էր ցոլայ նաև իր տաղերուն մէջ , որոնց մտածութիւններն ուժով և ուղղութեամբ ձուլուած են . խօսքերնուս վրկայ ըլլայ հետեւեալ երգը խաչակրութեան վրայ .

“ Խաչը մաքուր հոգի մը ու պարկեշտ կենցաղավարութիւն մը էր պահանջէ մեզմէ . այս պայմանաւ միայն երջանկութիւն կու տայ մեզի : ( Ճանրբեռ մըն է տկար մարդուն համար՝ որ չիշսեր իր զգայութիւններուն . որով հետեւ ինքը էր նուածէ մեր գործոց սաստիկ համարձակութիւնը : Ի՞նչ օգուտ զգեստնուս վրայ կրելը զայն , երբ որ սրտերնուս մէջ չենք կրեր :

“ Ով ասպետք , նուիրեցէք ուրեմն կեանքերնիդ , ընծայեցէք սրտերնիդ անոր՝ ուսկից որ առած էք ստացուածքնիդ ու կեանքերնիդ : Ով որ ատենօք

ծառայեցուց իր վահանն աշխարհիս՝ պատուաւոր միցանակ մը ընդունելու համար, և հիմա կը ժխտէ զայն լուտուծոյ, այնպիսին անմիտ է. վասն զի այս կոռուցս մէջ յաղթութիւն ձեռք ձգելը՝ աշխարհիս մէջ փառք կը բերէ և հոգւոյ փրկութիւնը կ'ապահովցընէ:

„ Խաբեբայ աշխարհս ժպտելով մը ինձի՝ կանչեց զիս. ես ալ հաւտալով հետեւցայ իրեն: Երկար ատեն կարթին ետևէն վազեցի՝ որուն ոչ ոք կը քրնայ յենուլ. երկար ժամանակ ցանկացայ հասնիլ անոր: ( ) գնէ ինձի, Վրիստոս, պաշտպան իմ, որ կարենամ թողուլ զայն՝ ի ձեռն քու խաչիդ որ վրաս կը կրեմ, „ :

Վիւրեմնկերկ ասպետ բանաստեղծը, որ նոյնպէս այն միջոցներու մարդէ, իր փոփոխամիտ սիրելոյն վրայ այս ժարտար այլաբանութիւնն ըրած է:

“ Իւղէ մը մեծցուցի. ամբողջ տարի մը ամենայն ինամբ ցուցուցի վրան: Տեսար դու անոր քաղցրութիւնն ու շնորհալից կերպը: Ուսերն օծեցի, և թոփք առնելով՝ դէպ ՚ի հեռաւոր աշխարհներ գնաց:

„ Իորէն տեսայ իմսիրելի թռչունս. ազնուական ու փառաւոր էր իր թոփքը, ոտքերն իմմետափսի լՃերս կը քաշէին, և փետուրները իմ ոսկուլս կը փայլէին: Իւցյ աւաղ, աչքերն ինձմէ կը դարձընէր: Ո՛չ, լուտուած շնորհէ ամէն մարդու զան որ սրտանց կը սիրէ:

„ Տիսուր է հոգիս, աչքերս թաց են արտասուօք, որովհետեւ հարկ է հրաժարիմ անկէ որ այնչափ կը սիրէի: Ո՛վ չարախոսք, որ պատճառ եղաք մեր աւրուելուն, լուտուած պատժէ՝ զձեզ. և օրհնէ զանոնք որ դարձընէն ինձի զան և անոր հետ՝ երջանկութիւնը „ :

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՊՔ

Սրբ Յովհաննես Ֆրանքինը<sup>1</sup> փետուելու խըրկուած վերջին արշաւանաց դարձը:

( Հրագիրք այս վերջերս կը հրատարակեն ( ) ագ Կվինդօք նաւապետին մէկ նամակը, որով կը ծանուցանէ լուսադիոյ Ծովակալութեն քարտուղարին՝ Ֆրանքին յաջող դարձն ու Ալբ Հովհաննէս Ֆրանքլինի ըրած արշաւանաց վըրայ ստացած ստոյգ տեղեկութիւնները:

“ Պարոն, կ'աղաչեմիմացընես ( ) առվակալութեան | որտ տեսուչներուն որ անվտանգ դարձաւ լուսադիա վերջին խուզարկութեան արշաւանաց նաւը, զոր խրկեր էր Ֆրանքլին տիկինը, և որուն հրամանատար ես էի:

„ Ո՛եծապատիւ պաշտօնէից շատ հաճութիւն պիտի պատճառէ գիտնալն որ Ֆրանքլինի արշաւանաց վիճակն ըս-

1 Ալբ Ֆրանքլին ծնած էր ՚ի 1785. և 1818, 1821 և 1825 տարիներուն յանձնուած էր իրեն՝ բներային ծովուց մէջ ճամբորդութիւններ ընել նոր տեղուանք գտնելու, և անցք մը փնտուելու համար հիւսիսային-արևմտեան կողմն ընդ մէջ հիւսիսային սառնամանեաց, որ հաղորդակցէ Ովկիանոսն ու Խաղաղական ծովն իրարու հետ: 1827 տարիէն ինչուան 1845 Վան Տիեմէն երկրին քաղաքաբետութիւն ընելէն ետքը, Յովհաննէս Ֆրանքլին նորէն ճամբայ ելաւ 1845ին մայիսի 26ին երկու նաւով, որ էին Երեման ու Դերեմ, և 168 նաւաստեօք: Յուլիսի 12ին Պաֆֆին ծոցէն նամակ մը գրեց Անգլիոյ ծովակալութեան պաշտօնարանը՝ լի յուսով և վստահութեամբ, և ճամբան շարունակեց: անկէց ետքը ամեննեին ճայն մը չելաւ վրան: 1848 տարին իր դարձին ժամանակն ըլլալով ինչպէս որ ինքը խոստացեր էր, Անգլիացիք ան առեն սկսան մտմտալ ու խոռվիլ այս երկար լուութեան վրայ, ու ծովակալութիւն նաւեր կազմեց, նոյնպէս Միացեալ Նահանգներն ալ. նաև Ֆրանքլին տիկինը նաւեր խրկեց իր ծափսովք գէպ ՚ի այն կողմերն ուր պիտի երթար իր ամուսինը: Ինչուան 1854՝ տասնըինը արշանք եղաւ, և 1,000,466 լիրա սգեռլին ( 25 մ. լիոն ֆրանկ ) ծախք եղած էր: Ծովակալութիւնը չուզեց ուրիշ արշաւանքի ծափն ընկել՝ ըսելով թէ ալ յոյս չկար թշուառ նաւապետին ճամբորդութեան հետքը գտնալու: 1857 տարւոյն՝ ֆրանք. լին տիկինը իր ծափսովն ուրիշ նաւ մ' ալ պատրաստէց՝ որուն հրամանատարութիւնն յանձնեց Մագ Գլինդօք նաւապետին. և ահաւասիկ այս յետին արշաւանաց վրայ է մեր գրած յօդուածը: